4 աղքատս, կանգնեցի
5 զխաչս ի հանգստ-
6 արանի սնուցողի իմո
7 Յովանէս քահանայի։
8 Որք երկրպագէք յի-
9 շեցէք ի տր։

Տարընթերցում.— 1. Զալ, որից արտագրելով նաև Հար և Լալ առաջին տողը չեն ընդօրինակել և արձանագրությունը թողել են անթվական։

2. Զալ, որից նաև Հար և Լալ 6-րդ տողում սնուցողի կարդացել են ուսուցանողին:

## 171. Գյուղի աճ ծայրին, «Թեփակլր» խաչքարի վրա

(Լուս. № 94)



Նկ. 93. Արձ. № 170։

*Հ ՆԿ Մ 1011*

Հրատարակված է՝ Զալ 29—30, Վիմ 8

1 *ՆԿ թւականիս հայոց եւ ի թագաւորութեանս Դաւթի եւ յառաջնորդութեն հաւր Էսեայ, ես Արեթնագով կա-*
2 *նգնեցի զխաչս զայս զի սա ինքն է բարձող բանին Այ, ի բարէխաւսութիւն ինձ եւ ամէնայն հաւատ-*
3 *ացելոց։ Աւհրնել Ած. ամէն։*

Ծանոթություն.— աւրհն(ա)լ *բառի մեջ* Հ-ի Ր-ից *առաջ գրվելը և մի քանի այլ բառերի մեջ Է և Ե գրերի շփոթությունը, բարբառային համարելով, պահել ենք նույնությամբ, առանց դիտողության։*

Տարընթերցում.— *1.* ՆԿ թւականիս հայոց Զալ *կարդացել է՝* ի թուին հայոց Ն։

*2.* Ի թագաւորութեանս Դաւթի Զալ *կարդացել է՝* ի թագաւորութեան հայոց Դաւիթ Բագրատունւոյ:

*3.* զխաչս զայս զի սա ինքն է բարձող Զալ *կարդացել է,* զխաչս, որ է բարձօղ:

*4.* Ի բարեխօսութիւն ինձ և ամենայն հաւատացելոց: Աւրհնեն(ա)լ Ած. ամեն Զալ *կարդացել է՝* Ի փրկութիւն մեզ եւ ամենայն հաւատացելոց:

## 172. Նախորդի մոտին, տապանաքարի վրա

*ԺԲ—ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Սարգ-*
2 *իս, որ է Փարջ-*
3 *եկ։*